ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

06.08.2025թ.
Ժամը 14[30]

Ի գիտություն՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի 2025թ. հունիսի 27-ի №72/ՊՆՏ հրամանով «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿԶՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ՝ Ա. Պետրոսյանը փոխարինվել է, և ընթացակարգի հանձնաժողովի անդամ է նշանակվել ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿԶՏԱ բաժնի ավագ սպա՝ Խ. Երիցյանը

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՊՆ ԳԿՎ ՏԱԳՎ բաժնի 2-րդ բաժանմունքի պետ՝ Լ. Թունյանը բացակայում է նիստից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության պետի տեղակալ, գնդապետ՝ Տ. Մաղաքյանը:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության պետի տեղակալ, գնդապետ՝ Տ. Մաղաքյան,
ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿԶՏԱ բաժնի ավագ սպա՝ Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ԳԿՎ ՏԱԳՎ բաժնի 2-րդ բաժանմունքի գլխավոր մասնագետ՝ Ռ. Զաղոյան:

Բացակայում է՝

ՀՀ ՊՆ ԳԿՎ ՏԱԳՎ բաժնի 2-րդ բաժանմունքի պետ՝ Լ. Թունյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ռեդինետ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի՝ էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝

«Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած հավելված 1.1-ում, առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի 2. կետում (մետաղական պատյանով ցանցային անջատիչ) նշված չէ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող *ցանցային անջատիչի սպառվող հզորության* վերաբերյալ տեղեկատվությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 06.08.2025թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

11.08.2025թ. ժամը 10:10 շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Գնման առարկայի				Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
	անվանումը	Չ/Մ	Քանակը	գնման գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը)	անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	հեռախոսային կայաններ (ավտոմատային հեռախոսակային կայանների համակարգեր)	հատ	1	300,000,000	«Ռեդինետ» ՓԲԸ	249 950 000	49 990 000	299 940 000

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Պողոսյան)

4.1 11.08.2025թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «Ռեդինետ» ՓԲԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող՝ Տ. Մաղաքյան

Գնահատող՝ Խ. Երիցյան

Գնահատող՝ Ռ. Զադոյան

Գնումները համակարգող՝ Գ. Պողոսյան